Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Ծննդյան 60-ամյակի առթիվ)

Բարկեն Նիկոլայի Առաքելյանը ծնվել է 1912 թ. փետրվարի 1-ին, Հոկտեմբերյանի շրջանի Գեչրլու (Մրգաշատ) գյուղում: 1938 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, ընդունվում է ասպիրանտուրա և գիտական աշխատանքի է պատրաստվում ակադ. Հ. Օրբելու ղեկավարությամբ: 1941 թ. Բ. Առաքելյանը պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա «Հայկական բարձրաքանդակները V—VII դարերում» թեմայով:

Հայրենական մեծ պատերազմի օրերին Բ. Առաքելյանը գտնվել է սովետական բանակում ու մասնակցել գերմանական զավթիչների դեմ մղված մարտերին: 1946 թ. նա վերադառնում է գիտահետազոտական աշխատանքի:

Բ. Առաքելյանի գիտական բազմամյա գործունեության բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ նա հանդես է գալիս որպես և՛ պատմաբան, և՛ հնագետ, ընդ որում նա զբաղվում է Հայաստանի ինչպես միջնադարյան, այնպես էլ հին շրջանի պատմությամբ:

Եռպատերազմյան տարիներին Բ. Առաքելյանը հաջողությամբ զուգորդում է գիտահետազոտական աշխատանքը գիտակազմակերպչական գործունեության հետ: 1947—1949 թթ. նա վարում է ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղարի պաշտոնը. 1947 թ. խմբագրում է ԳԱ «Տեղեկագիրը» (հասարակական գիտություններ), 1949 թ. ընտանվում է պատմության ինստիտուտի հնագիտության և վիմագրության բաժնի վարիչի պարտականությունները:

Բ. Առաքելյանի ղեկավարությամբ կատարվող Դառնիի պեղումները, սկսած 1949 թվականից, ի հայտ բերեցին Հայաստանի մ. թ. ա. առաջին դարերի մշակույթը բնութագրող անփոխարինելի հուշարձաններ: Դառնիին զուգընթաց նա 1962 թ. սկսեց Արմավիրի պեղումները, որոնց շնորհիվ ուրարտական և միջնադարյան մնացորդների կողքին հաստատվեց հին հայկական շերտի գոյության փաստը: Տրդատ կայսեր լատինական մեծ արձանագրության հայտնաբերումը հին Արտաշատի շրջանում հիմնավորեց այդ հնչակավոր մայրաքաղաքի հնագիտական ուսումնասիրման անհրաժեշտությունը: 1970 թ. Բ. Առաքելյանի ղեկավարությամբ պեղումներ սկսվեցին նաև Խոր Վիրապի բլուրներում, որոնց արդյունքները մեծ նշանակություն կունենան Հին Հայաստանի մշակույթի ուսումնասիրման համար:

1954 թ. Բ. Առաքելյանը պաշտպանում է դոկտորական դիսերտացիա «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում» թեմայով, որն ապա լույս տեսավ երկու ստվարածավալ հատորներով: Իր այդ մենագրությամբ նա մեծապես նպաստեց զարգացած ֆեոդալիզմի շրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական մակարդակը գիտականորեն որոշելու գործին:

1959 թ. Բ. Ն. Առաքելյանը նշանակվում է նորաստեղծ հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր: Նրա ղեկավարությամբ ինստիտուտը դառնում է հանրապետության գիտական նանաչված օջախներից մեկը: Վերջին տարիները Բ. Առաքելյանը եռանդուն մասնակցություն է ցուցաբերում հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի ակադեմիական հրատարակության գործին: Նրա ղեկավարությամբ ավարտվել է Հայաստանի IX—XIV դարերի պատմությունն ընդգրկող III հատոր:

Ուշագրավ է նաև Բ. Առաքելյանի կատարած գիտա-մանկավարժական աշխատանքը Երևանի պետական համալսարանում և այլուր: Նրա դասընթացները ծանոթացնում են մեր ուսանողությանը Հին Հայաստանի մշակույթի զարգացման ամբողջական պատկերին:

Բ. Ն. Առաքելյանը 1967 թ. ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, իսկ 1969 թ. նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում:

Ծննդյան 60-ամյակի առթիվ վաստակաշատ գիտնականին հաջողություն և նորանոր հաջողություններ ենք ցանկանում հայ հնագիտության առջև կանգնած խնդիրների լուծման ասպարեզում:

Գ. ՏԻՐԱՏՅԱՆ